ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ
Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 1 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКАЯ ОБЛАСТЬ г. ВЕДИ
ОСНОВНАЯ ШКОЛА №1 им. Г. МАРГАРЯНА

0601 թ. Վեդի, Կոմիտասի 9
հեռ. (0234) 2-41-80

Индекс: 0601 г. Веди, ул. Комитаса 9
тел: (0234) 2-41-80

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Գ. Մարգարյանի անվան №1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի և տեխնոլոգիայի (տղաների խումբ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՆ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 3 ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից -16^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 6-ին ժամը 12:00-ին, ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Գ. Մարգարյանի անվան №1 հիմնական դպրոցում, Կոմիտասի 9-ը հասցեում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234) 2-41-80